Տեղեկատվություն - Հիմնավորում

«Քաղաքաշինություն և Տնտեսություն» ՀԿ-ի և նրա հիմնադիր նախագահ Կարեն Մխոյանի գործունեության բնույթը համընկնում է ՀՀ արդարադատության նախարարության գործունեության հիմնական ուղղություններին, և համապատասխան ոլորտում նրանք ունեն մեծ մասնագիտական փորձառություն՝ ինչից ելնելով հավաստում ենք, որ ՀԿ-ի մասնակցությունը՝ ի դեմս լիազորված անձ՝ Կարեն Մխոյանի, Խորհրդի աշխատանքներին կնպաստի Խորհրդի առջև դրված խնդիրների և նպատակների առավել արդյունավետ իրականացմանը:

«Քաղաքաշինություն և Տնտեսություն» ՀԿ-ն ստեղծվել է 2015թ և իրականացնում է ակտիվ գործունեություն ՀՀ օրենսդրությամբ թույլատրելի և իր կանոնադրությամբ նախատեսված աշխատանքներում: Կազմակերպության գործունեության հիմնական խնդիրներից են ՀԿ-ի անվանմամբ ներկայացվող, ինչպես նաև հարակից ոլորտներում օրենսդրական բարեփոխումների, այդ թվում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքներին աջակցությունը և մասնկացությունը:

ՀԿ-ն օրենսդրությամբ սահմանված հնարավոր եղանակներով իր մասնակցությունն է ունեցել ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող քաղաքա-կանությանը, մասնավորապես ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ միջոցառումների ծրագրի, ««Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու և «Համատիրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» օրենքի և հարակից օրենքների, «Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի կանխարգելման հարցերով մարմնի մասին» օրենքի «Գործարարների շահերի պաշտպանի մասին» օրենքի նախագծերի հետ կապված գործընթացներում(համապատասխան տեղեկատվությունը՝ ՀՀ արդարադատության նախարարությունում և իրավական ակտերի նախագծերի միասնական կայքում):

«Քաղաքաշինություն և Տնտեսություն» ՀԿ-ն հանդիսանում է նաև Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ:

«Քաղաքաշինություն և Տնտեսություն» ՀԿ նախագահն, ունենալով իրավագետի, ճարտարագետ շինարարի, հանրային կառավարման մագիստրոսի որակավորում և համայնքային և քաղաքացիական ծառայության բարձր պաշտոններում երկար տարիների աշխատանքային փորձ, անընդմեջ ղեկավարել է կազմակերպությունը՝ ստեղծման օրվանից:

Առավել մանրամասն՝ կից ներկայացվող ռեզյումեում:

«Քաղաքաշինություն և Տնտեսություն»
ՀԿ նախագահ Կ. Մխոյան